

1 (167). ՀԱՆԹՈՅԻ ՍՈՒՏԵՂՈՒՄ

Դե՛, դուզն ասած, ես դրոշմեցի եմ ու Ղրր-
դիի եանդերն էլ ըսկի անսած չկամ, քյոնիս
եմ ըլել, կեդիցը առաւ եմ եկել: Ամա դե մի
սուրի մեր Մեերաբըմը, իմ մերը ընդի յա, բը-
նա եմք աըլել, շատ չի, կենդ օխտը եսա կով
ունենք, էրկու եսա էլ են անդերը կըռքալսզ սե
կյոմեշներիցը: Կյոմեշ մի ասի՛լ, մի երրմը-
քեր, ավարի մեշը մաալ, էա սաւարն արթեն
ճընջված են էլի: Սրա եմար ա խեղճ մերս
դունչաք անըմ. — Հանթո ջա՛ն, ցավըտ աա-
նեմ, Հանթո, դսքիտ մեռնեմ, մի կերպ արա
րառուք՝ էա անդեր կյոմեշնիքը, դենն արա,
ուրուշ տեղով ասրեր:

Էտ ա անե ասանըմ եմ, պսերմ: Սի տարի,
էա թե վընճը պրտանեց, ի՞նչ պտանեց, գի-
դըմ չեմ, մի անագին իտգեր ունինք, իտգա-
րածնիքը խրոկի ավին, ըսեցին. — Ծեր իտ-
գերը ազդուն են, շատ են ման կյալի:

Էս իտգերը սղաք ըրի ասարա, տարա Փե-
տա իսսչովը, անե կետնրտուտովը, էս կեսի
դըրըդներին ըրոճցըմ եմ: Դուզն ասած, կյո-
մեշն աս, նոր ծըլոց ա, կուտինը, եսճաըը
վրեր աշունքը վեր ա կյալի, ծըմեռը ծընի տա-
կին կենըմ ա, եենց ետըր եեռ ա ընգըմ, սրըմ
ա ծըլիլը: Ծըլել են՝ ծըլոցին տարել եմ քողն եմ
արել, թե վընճը ուսվ ըրեքնակը ջանիս
տվուց, ջանս տըքացալ: Հա՛, կընեմ: Սի
վախտ, դուզն ասած, վրեսիս մինը մենակ
քյուրա յա, արեւիս չկա, էն մի վընախս էլ՝
մենակ տըրեխս ա, քյուրա չկա: Սի անդեր
մնացած էլ միչած պենջակ ունեմ, դուզն
ասած, ես նոր եմ ընդուր անուր զիդըմ, էն ա
էն վախտ միչած պենջակ ասին, եմի անլեզ-
րեյկա են ասըմ: Էտ անդեր տելեգրեյկեն էլ
կեցիս, ուրեմը մենակ միչի պամբակիցը ըս-
տի, ընդի կրոնրտակերիս կենըմ ա, մնացողը
իմ մերը քյուրի ճըսկից էլ կըլկատել ա: Էտ
տըլըգրեյկեն էլ վրեսս քըցած՝ էտ ըրկի

ասկին թուգունքս դեմ ըրի, քնեցի: Վրեր
քնեցի, շատ ի քնել, թե քիչ, մի վախտ տեսա
իմ մանը՝ իմ ետը մերը, անսել էլ չեմ ըսկի,
ըսկի նկարն էլ չունի, մենակ էն ա գիդացի,
վրեր մա դի ըլի, ըրիս սիլլու տվուց, ասեց.

— Լակո՛ւս, ու՛ր ես քնըմ, իտգերը կըլել են:

Տեղիցս վեր թրոա, տեսա, ա՛յ մարթ, ի՞նչ,
ուրեմը իտգ էլ չկա, մի գատ էլ չկա: Էս իտգի
չաքլենըմը, չաքլենըմը դեսը քյնացի, դենը
քյնացի, տուս երս թուրքի իրեսը: Ը՛հ, ի՞նչ
տենամ. էս անդեր իտգերը երեսի կոքաուիը
ծախյած, ծաղիկը սեե երկնքի ըրիսին, ու էս
իտգերը մի տառած՝ թմնուզ սըրցըել են,
սիպտակ կորստիը իրեսը քըցել: Փեռը
քըշեցի, էս իտգերին տվի ճարթեցի: Թուրքի
իրեսն ա, պսի թուրք տեսալ, կորստիին
իրա եերթին, իրան եուր երբամվել ա:

Շոնեսներու թվիցն եմ իտսըմ է՛, սա նոր
պան չեմ ասըմ, էն վախտը վրեր ըսկի թուրքը
եայի իրեսին կաղներ վրեչ, թե եետը իտսեր,
տսեր. «Հուտի մախազը ինճ կաչըմ ա, եարամ
ա»: Պա՛, բա վրեր էտ վախտը թուրքը գիդա-
ցել էր իտգն իրան եուզն ա մաել եա՛, էտ
իտգի տըրունչ կեղը թամուզ կվառեր: Վեր
կըցա էտ ա իտգերն աղաք ըրի, տուս եկա,
սաըն աշմիշ արի թե չէ, ըհ, ճըղատ-ճըղա-
տիլով, էտ իտգերը սառցի իրեսը մի երոը-
փալս մըչե կետը թու-թու ըլիլով, թու-թու
ըլիլով, թու-թու ըլիլով, եկա եասա կետը: Եկա
եասա կեսին, քիչ ա մնըմ թե ծորի բողազին
երսնեմ, մի վախտ տեսա ճընջմընջեղ ինճ
վըա տվին: Վրա տվին, դես խըլշկոտացի,
դեն խըլշկոտացի, բայց մի լիսիկ մերուն
ունենք, էս անդեր լիսիկ մերունը էս դսքըմը
ըրերմ չի: Ըսեցի. «Պա՛, տղա, կա-չկա լիսիկ
մերունին կեղը խեխաել ա, ճանջերն ընդուր
են վրա տըլել»: Յաշեմ ի՞նչ տենամ, մոռի,
ըհ, էս սարի մոռը տեսած կըլեք, ա՛յ մարթ,
եայեր եք չէ՞ վերջըլեղչո, էտ մոռին ի՞նչ,
րատիան միչե Զյուրդամուրը էտ ծորնրտուս
թամուզ մոռի ա, եասա՛ծ, բանդաղ-բանդաղ
ըլած, ըսեցի. «Սի մոռը դեմ ուսիլ»:

Սրիսելի էս մոռիցը կերա, տուտ երլե
կուշտըմարա, դուզն ասած, սն էլ՝ էս անդեր

¹ Մուրը Տավուշում ասարածված քանահյուսական
ժանրերից է: Բանասաց Տիգրան Բաբայանի երկա-
ցանկը եարուսա է երկարաշունչ և ինքնաաիպ ստեղծով
(ժանրը. քանահավաքի):

աւելեցրեցին, վրեր կենըմ եմ, արդըցըմ եմ: Սա կեցել եմ, կես տեղն էլ չաթուն կապել, օխտանասուն օխտը ծակ կա վրեն, էս մորուցը քրդեցի ջըբերս լըցի, մի վախտ աեսա տանակը էն ա եա վեր ա ընգըմ, դուզն ասած, աանակն էլ լնվն ա, լսվօսալ կուճուր պնն ա էլի, էրզան ա, փաչես մի կախ ըլսծ, աուս քըշեցի էա տանակը, եա՛ ռսեցի: «Մի էրկու մոռի թուսի կըարեն ու ծեսու ունեն, վրեր ճամփա ընգնեն»:

Մի վախտ տանակը ելե ծեռիս էր, սեն կոխիլիս տեղը աեսա միւր քըմակես փընթըրուց. — Ըհ, ըհ, ըհ: Ըսեցի. «Էս ի՞նչ էր արա, էս ելեյի թե էն Կադար պըռավի փընթիընթոցն ըլի»:

Մի վախտ եա մաիկ ըրի, աեսա մի ա՛յլ, մի եըրըզորմունք, մի պնն, խի արչ վըե՛ր, մեր էն ջանավար կյոմեշներիցը մեծ: Էս արչը դըբա ինձ՝ «Վա՛յ նանի ջան», — կյոռացի: Տեսա արչը էրկու վըեաների վրա կալնեց, ելե արչը էրկու վըեաների վրա կալնեց, աեսա էս էրկու կըռնրտակերը խի լավ պըլսալաաին, սիպտակին ավուց, էն ա ըրեքնակը վըեն ընգավ, աչկերս ծակըմ ա: Դրբա էա արչին եուջում ըրի, կըռնրտակին տանակը ավի: Էս արչը եը՛ արավ, թանթիկովը միչկիս ավուց, մաա փորասաակը, մրչե չանեն դես կըեըլի՛րեր, պեն կըհրլորեր, վրեր ինձ ըռիսի, կըռնատակը խառնեցի: Էս արչը վեր ընգավ, վեր ընգավ, ծո՛ր, ծըմակ, ճանջերը վրա են աալի, ի՞նչ անեն, վըե՞նց անեն. «Չէ՛, աղւս, վրիդուիցը էրկու լաաան կըտրի»:

Էրկու եաա ուզածըտ, քըլնկիս պես եասաիկ, ըառաննի կըարեցի, ըըը՛ էսքան:

— Արա՛, աիպեր ջան, աերի էն վախտը քու բըլակնիքը էսքան չէր²:

— Արա՛, էն վախտը սոփած զստ ի, ըըը սեն էր էլի, մաաիս պես:

— Աերի էա դայդի յսաանները ու՞ր կտըկցիր:

— Արչը վըեն դեն արնիլ, քաշ աամ:

— Ա՛յ մարթ, աերը արչը էա լսաանը պըլեիլ չի՛: Գոնե վըեաիս դայդի:

— Արա՛, դե մեկ վըեաիս դայդի, ըըը՛, ա՛յ ծընգանս պես եասա էր: Հմի ծունգս էսքան եասա ա, էա կսրալ չեն պըրցըրցնեն, էն վախտը ծունգս պըննակ էր:

Ուրեմը ծընգանս քան էրկու եաա լնվ լաաան կըտըկցի, քցեցի էա՛ արչի աակը, ծըրքեցի, մի լսվօսալ քաշան արած քցեցի սաոցի իրեսը, սաոցի իրեսը քցեցի, ծըրքեցի: Քաշ ավի, դվերցըրի զոլ ծորը, էա արչը մաշկեցի, դե ընդիան՝ ծորիցը յալը դեն աուս կյնլ աերի: Է՛, կետընվեր դվերիլ պեն մերքև քաշ աալով, քաշ աալով, քաշ աալով սլիքի ծորը երսցրի, մաշկեցի միս ըրի, շըրքեցի, եկս աեսա նանը աանը չի: Ա՛խ, ջան նանի ջան, նան չէր եու, նրա կըրզմանին մաաաղ, Քրիստասը վրեր ասել են եա՛, Քրիստասից սուրփ էր, Մարյամն էր էլի, եա՛ Մարյամը՝ Քրիստասի մեր Մարյամն էր: Եկա աեսա նանս քյնացել ա ծաքերի եըմար աիւր անի: Եկա. — Նուրա՛ր, Թառա՛ն, Անթառա՛մ, Խանո՛ւմ, Սաննա՛մ:

Միճն էլ ա աանը չեն:

— Ա՛ ըրեխեք, էս վըերդի՞ են:

Նաները քյնացել են կեաի էն դուիցը՝ Չրիսկլիսկանի դուիցը, ծաքերի եմար կաղնի աիւր սլիւրեն: Դե աշունքն ա, դուզն ասած, վեր կալս էա արչի կիաանը արըի լսչիսի կըլիսին: Լաչուիս ա՛ սարիցը քոչել ենք, եկել ենք, աշունքն ա՛ լսչուիս ենք սաքքել, արրել: Լաչիսի կըլիսին արրի, քյնացի ըսեցի. — Էլ եմ կյնլի, — ըրեխանցը թափշուր ըրի, ռսեցի, — ըրկխեք, նանը եկավ թե չէ, ասա էս ամբողջ արչի միսը ժողվուրթին փայ անի:

Դչերեցի քյնացի մի շալնկ էլ սլիքի: Ըհ, եկա, վրեր օրիցը մոաացա վըե՛չ, դուզն ասած, մի աունն ռսաի ա, միւրը՝ երե Քյուրդամուրի դըաղին, իրարից շաա են եեռու, դըթնելտվը, էրկու լսչուի դաթովը եազիր մի օքմի անց ա կենըմ էլի: Տեսա ռաի ի՞նչ, վըենց վրեր կյարունքը ճանջը ծաք աա, աեն ճանջի արթոց ա կյնլի, քյնամ աենամ էա կետընվեր, էա կեանըվեր էլ ճանջ չի մնացել, էա կյարունքը, վրեր ծիաուկ ածող ճանջեր են ըլըմ՝ ալըանցի երեաի եըվաքվել են էա մսի վրա: Հուսի տվի, ճանջերը դենն ըրի, դես-դեն, էա էլ կըլիսին քցեցի: Քյնացի նորից մի շալնկ սլիքի, էլեա ասըմ եմ էլի: Ա՛խ, ջան նանի, նան չէր եո՛ւ, ա՛յ մարթ, եըրեդեն մի դուշ էր էլի, էն Պիզաս ծիանը վըեր ասըմ են եեքիաթներըմը, թևավուր դուշ՝ այ նեն էր իմ նանը, վըերդի վրեր քյնըր, չուի վրա աուս կյեր՝ եաիորմը եա՛մ սիզը կսր, եա՛մ մասուր կար, եա՛մ թուրը կար, եա՛մ գիլաս կար, սա

² Ունկնդիրները միջամտում են և փորձում սաախոսի թափը կտորել (ծանոթ. թանահավաքի):

հոս՝ շուր կար, տմեն ինչ էլ սիրեր: Հանդը քյներ շուշան էլ կար հետը, կըզանուիս էլ կար, էն անդեր իցկոտ էլ կար, տո հլե է՛, է՛ վրեր ասես է՛ն, է՛ն, է՛ն սինդրուկ էլ:

Հետը շըլակած սիրեր քուրառանձ-մուր-սուանձ, եկա տեսա մի մեշոկ ըտի վեր ա քցել, խիղճ մերս էտ ծաքերի փայ սիրեն առած ետ՝ «Հա, հա, քիշ հա՛ քիշ, հայ ծեր տերը մեռնի, թուխսը տընդուն անիծվի», ճանջերին դենն ա անըմ:

– Մերա, էտ իփ՞ չես փայ անըմ:

Թե. – Վրերթի ջան, Հոմթո ջան, քըզանի վըխծել եմ:

– Ա՛յ մերա, իփ՞ հս վախըմ, ա՛յ ցավառ տանեմ, էսքանն իրեք ըրարա միս ա:

Վիր կուլս էս օքըմը ինչքան օքմենի կար, տունե-տուն, տունե-տուն փայ ըրի, մնացողն էլ վեր կուլս ու սուրուն էտ ա տըրի կուչկի վրա, ըրրի վրա էլի ու մի եատ Աբոնաշ ունի, մի հատ էլ Բոնոշ, լըծեցի:

– Աբոնաշ, ե՛, Բոնոշ ե՛:

Ա՛յ մարթ, էս եզնիքը կըոմաններովը կուրըմ չեն էտ տըրչի միսը հանեն, կեսը փայ եմ արել, էտ կեսն էլ չեմ սիրըմ, հնար չի բլըմ: Ա՛յ մարթ, մի սուսնկ էլի, մի սուսնկ: Էն գազա-նանոցըմ փղեր ես սեսել չե՞, էա փիղն էն արչի փորի տակովն անց կկենեյ, ա՛յ տեե պանն էր: Դե հիմա, էսքանից հետո ի՞նչ ասեմ: Հա՛, էտ թուշըմն էլ վրեր քյնացի վերչի պանը սիրեն հա՛, մրսփկ ըրի անես ըրեքնակն ընգել տ գյուլի մեչն ու, երես բաի մի պան, ըրեքնակը հու գյուլի միչին չի՞, երկնքըմն ա, բաիտն մի ըրեքնակ վեր կցավ, յաշեցի անես ի՞նչ՝ մի կըոմրախեծ ծուկը, դես թըռա, պեն թըռա, էա ծուկն բսկի եաշիվ չի, թե ես օքմի եմ, վրենց վրեր իյան կսխկին մի մորեխ բլեմ: Հր՛ րրի, էտ սանանկը քըցեցի, էտ չափաջաղովս մի սարի կուրեցի ու աուր թե կուսա էտ գյուլի կես անդը, էա ծըկսն ճըկասփն: Էս ծուկը շուտ եկավ, ծուկը շուտ եկավ, էս գյուլը՝ Ծիրի ծովն էլ, մեյ Ծիրի ծովը, ա՛յ մարթ, լողոցած էլ կըլեք միչին, զիդըմ չե՞ք իփ, էհ, էտ Ծիրի ծովը կըոմրեց, արին աառավ: Կըլխնիտ ի՞նչ ցըվըցնեմ, հր՛ արի, տելեգրեկեն ուսերիցս շըպրաեցի, ընգա ճըրի միչը, երնեցի, ըտի մըչե ծեռներս կլարսվ, սառավ մաաներս: Դե ծին ա, ա՛յ մարթ, ըրեխոս չես՝ Տըլսուն ա էլի: Էա ծուկը վեր կուլս, սուրուն եանեցի էա ծընի իրեսին,

փողը ճըղեցի, մաքրեցի ու էտ տ եա՛... ըեր հենց էտ մոմենտին մընել տեսա մինն ասեց. – Այդա՛, էտ ի՞նչ պանի ես:

Կյուլիս պըրցըցնեմ տենամ իմ կեղսցի Նըսիբանց Վարթազար: Դուզն տստծ, էտ մարթը լնվ մարթ տ, համտ մի քիչ ուշունց տվան մարթ ա: Դե վըխծա, թե մի պան տսի, ասեցի. – Ը՛, ը՛, ը՛, Վարթազար դայի, ուզըմ եմ ծուկը փըսնեմ:

– Արա՛, ա՛ թուլս, էս ստոածովը կետը չմոնես, կմրես՝ սառած ա:

Մի վախտ յաշեց անսավ վրեր ի՞նչ. երեսի իրան քըմակին ճանջը գըվվըմ տ, ճանջի գըվվալը չեմ գիդըմ, մտիկ արտվ տեսավ վրեր, վրեր երեսի մի ծուկը կա ըտի վեր ընգած:

– Արա՛, ա՛ կուճուր, ի՞նչ տամ էտ ծըկանը:

Ասեցի. – Դե ի՞նչ ասեմ, Վարթազար դայի, ինչ վրեր տոս էլի:

– Արա՛, դե տո՛ւ առնիլ դես նոնին աալ:

– Նոնի եմար մի տուչ եմ սպտնել, տաղել:

– Արա՛, քե մտաաղ, բա ես տուչի եմար եմ տոս կյալի էս քուերը:

Թե. – Դե ու՞ր, ընչի՞ հմար:

– Բա ինձ արչի միս ա պետկը, – ասեց:

– Ա՛յ մարթ, – ըսեցի, – Էն տ երենի, տհա-գին բնդի վեր ածած կա, վրեր բլի վրեչ, բլի վրեչ իրեք շալսկ աաթել եմ, մի չորս բկնանի ըրարա յա՛:

Ասեց. – Վրեր եենց ա, կյալիս եմ, ետմա դե էս ծուկը վրեր ինձ աաոս, կստնեմ:

– Դե՛ վեր կուլ, աա՛ր:

– Ի՞նչ աամ:

– Մի գատ էլ ա:

Վերչը վրեր շաա տեղս նեղեց, ըսեցի. – Դե մեկ տալիս ես, մի իրեք աբասի փող աու:

– Արա՛, լսկոտ, էս ինչքա՞ն տ էս ծուկը, վրեր իրեք աբասի էլ աամ, իրեք աբասի աամ մի վրեխճար կառնեմ:

Ասեցի. – Վարթազար դայի, քանի՞ կիլս կըլի, քանի՞ գըրվանքա կըլի:

Թե. – Շատ, շաա բլի մի տտսը գըր-վանքա:

– Արա, քու աունը շինվի, բա էսքանը տտսը գըրվանքա կըլի՞:

Թե. – Հա՛, տասը գըրվանքա գոռի կըլի:

– Ա՛յ Վարթազար դայի, ստ ծանդը կըլի, ծեռով ես գիդըմ եմ:

– Չէ՛: – Վերջը տսըմ ա, – Կարճ կոնկրետա՛
աասը գրըվանքա, ի՞նչ աամ:

Ես էլ հրաժարվեցի, ասեցի. – Վրեր տասը
գրըվանքա ա, աայիս չեմ:

Վեր կալսնք վրեան ու կյուխը դեն
ածեցինք, վտրը-մորը դեն ըծեցինք, ջան,
նանի ջա՛ն, նանի, ա՛յ մարթ, դե իմ նանը
ոսկի կնիկ էր էլի, ելե պիրիք օրեն, վրեր հա՛մ
արչի մսիցը դի սանիկ, հտ՛մ էլ ծրկնիցը, մի
վախիտ նանս տեստվ ու ասեց, թե. – Վրերթի,
էտ ի՞նչ ա:

Թե. – Մերա, մերա, բա էս Վանթանգար
դային տսըմ ա, թե աասը գրըվանքա կըլի:
Տասը գրըվանքեն, մերա, քանի՞ կիլո յս:

Թե. – Չորս կիլո ա: Դե գրըվանքեն չորս
հարիր գրամ ա, վրերթի ջան, բա գիղըմ չե՞ս:

Ուրեմը էա ծուկը չորս կիլո՞, կոռորս

կկարեն չորս կիլո չի ըլի, շատ կըլի: Ես էլ
գիղըմ եմ, թե աասը կիրո ա, արտ համար էլ
եեաը վիճըմ եմ, ուրեմը չորս կիլո չի: Կարճ
կոնկրետա, կյուխնիա ցըվըցնըմ չեմ, ժողովուրթ
ջան, իմ մերը սիրավ, ա՛իւ, ջան նանի ջան՝
մեչկի քյամարն էլ ոսկի, լուզուն էլ ոսկի, տո
մագերն էլ ոսկի, ամա դե մորս շորերը եին էը
էլի: Դուզն ասած մի երըսնքի շոր ուներ մե-
նակ, օխտը կրկատան էր վրեն: Թե չէ մնա-
ցալ շորերի վրա քյուլքից էլ կրկատան կար:
Պիրավ էա ա քշերթի վրեն արրինք, տեսանք
դուզ օխտը կիլո օխտը հարիր գրամանոց,
բայց էլի եմ ասըմ՝ վրեան ու կյուխը, վտրը-
մորը դեն ածած: Օխտը կիլո օխտը հարիր
գրամանոց մի հաա կարմրախեծ ի վրոնել:

Դե էաքանն էլ, դե բըզրեցի ծեզ մստաղ,
էա ա եա բոլ ա էլի, քյնամ ես քնեմ:

